Գործի որոշում 2020-003-FB-UA

Գործի համառոտ ներկայացում

Վերահսկիչ խորհուրդը հաստատել է Ֆեյսբուքի որոշումը հեռացնել գրառումը, որը պարունակում է ատելության խոսքի վերաբերյալ Ֆեյսբուքյան համայնքի նորմերը խախտող վիրավորանքներ:

Գործի մասին

2020 թ. նոյեմբերին օգտատերը հրապարակել է բովանդակություն, որը ներառել է պատմական լուսանկարներ: Վերջիններիս նկարագրության մեջ նշված էր, որ լուսանկարներում պատկերված են եկեղեցիներ Ադրբեջանում՝ Բաքվում: Հարակից ռուսերեն գրված տեքստում նշված էր, որ հայերը կառուցել են Բաքուն, և որ այդ ժառանգությունը, ներառյալ եկեղեցիները, այժմ ոչնչացված է: Ադրբեջանցիներին նկարագրելու համար օգտատերն օգտագործել է «тазики» («տազիկներ») բառը՝ հայտնելով, որ նրանք քոչվոր են և չունեն պատմություն՝ համեմատ հայերին:

Օգտատերը ներառել է հեշթեգեր, որոնք կոչ են անում կանգնեցնել ադրբեջանական ագրեսիան և բարբարոսությունը: Մեկ այլ հեշթեգ կոչ էր անում ճանաչել Արցախը՝ Լեռնային Ղարաբաղի տարածաշրջանի հայերեն անվանումը, որի շուրջ կենտրոնացած է Հայաստանի և Ադրբեջանի միջև հակամարտությունը: Գրառումը դիտվել է ավելի քան 45 000 անգամ և հրապարակվել երկու երկրների միջև վերջին զինված հակամարտության ընթացքում:

Հիմնական բացահայտումները

Ֆեյսբուքը հեռացրել է գրառումը Ատելության խոսքին վերաբերող իր համայնքի սկզբունքների խախտման համար՝ պաշտպանվող հատկության (ազգային պատկանելիության) հիմքով մարդկանց խմբին վիրավորելու համար:

Ադրբեջանցիներին նկարագրելու համար հրապարակման մեջ օգտագործված է «тазики» («տազիկներ») բառը: Մինչդեռ բառը ռուսերեն նշանակում է «լվացման», այն նաև կարող է մեկնաբանվել որպես բառախաղ, քանի որ ռուսերեն «азики» («ազիկի») բառը ադրբեջանցիներին նկարագրելու համար օգտագործվող վիրավորական խոսք է, որը նշված է որպես հայհոյանք Ֆեյսբուքի վիրավորական բառերի ներքին ցանկում: Խորհրդի կողմից պատվիրված անկախ լեզվաբանական վերլուծությունը հաստատում է ֆեյսբուքյան մասնագետների կողմից «тазики» բառի ընկալումը՝ որպես արժանապատվությունը նվաստացնող հայհոյանք ընդդեմ ազգային ծագման:

Կոնտեքստից, որի մեջ օգտագործվել է բառը, պարզ երևում է, որ այն արժանապատվությունը նվաստացնելու նպատակ է ունեցել: Այդպիսով, Խորհուրդը վստահ է, որ գրառումը խախտել է Ֆեյսբուքի Համայնքի սկզբունքները:

Խորհուրդը համարում է նաև, որ բովանդակությունը հեռացնելու Ֆեյսբուքի որոշումը համահունչ է ընկերության արժեքներին: Թեև Ֆեյսբուքն ամենամեծ արժեքը համարում է «Ձայնի իրավունքը», արժեքների շարքում կարևոր տեղ են զբաղեցնում նաև «Անվտանգությունը» և «Արժանապատվությունը»:

2020 թ. սեպտեմբերից նոյեմբեր Լեռնային Ղարաբաղի վիճահարույց տարածքների համար պատերազմը տարել է հազարավոր մարդկանց կյանքեր, իսկ խնդրահարույց բովանդակությունը հրապարակվել է հրադադարից քիչ ժամանակ առաջ:

Հաշվի առնելով հայհոյանքի՝ արժանապատվությունը նվաստացնող բնույթը և վտանգը, որ նման հայհոյանքները կարող են բերել ֆիզիկական բռնության, Ֆեյսբուքն այս դեպքի համար ստացել է թույլտվություն ընդունել «Անվտանգություն» և «Արժանապատվություն» հասկացություններն ավելի կարևոր, քան «Ձայնի իրավունքը»:

Խորհրդի մեծամասնությունը համարում է, որ այս գրառման հեռացումը համահունչ է արտահայտման ազատությունը սահմանափակող՝ մարդու իրավունքների ստանդարտներին:

Խորհուրդը համարում է, որ ադրբեջանցիներին նկարագրելու համար «тазики» բառն օգտագործելը՝ որոշակի ազգությանը պատկանող խմբի համար, դասվում է որպես արժանապատվությունը նվաստացնող պիտակ, և որ Ֆեյսբուքն ուներ գրառումը հեռացնելու իրավական հիմք:

Խորհրդի մեծամասնությունը Ֆեյսբուքի կողմից գրառման հեռացումը գնահատել է որպես անհրաժեշտ և համաչափ՝ այլ անձանց իրավունքները պաշտպանելու համար: Արժանապատվությունը նվաստացնող հայհոյանքները կարող են ստեղծել խտրականության և բռնության մթնոլորտ, որը կարող է լռեցնել այլ օգտատերերի: Զինված հակամարտության ընթացքում հատկապես կարևոր են հավասարության, անձի անվտանգության և, հնարավոր է՝ կյանքի, մարդու իրավունքները:

Չնայած որ Խորհրդի մեծամասնությունը Ֆեյսբուքի պատասխան գործողությունը համաչափ է համարել, փոքրամասնությունը կարծում է, որ գործողությունը հակասում է միջազգային ստանդարտներին և համաչափ չէ: Փոքրամասնությունը կարծում է, որ Ֆեյսբուքը պետք է կիրառեր պարտադրման այլ եղանակներ, սակայն ոչ հեռացում:

Վերստուգիչ խորհրդի որոշումը

Խորհուրդը հաստատում է Ֆեյսբուքի որոշումը բովանդակությունը հեռացնելու վերաբերյալ:

Քաղաքականության վերաբերյալ խորհրդատվական հայտարարագրի մեջ Խորհուրդը հորդորում է Ֆեյսբուքին՝

- Հետևել, որ օգտատերերը միշտ տեղեկացված լինեն իրենց նկատմամբ կիրառվող Համայնքի ստանդարտների, ներառյալ Ֆեյսբուքի կողմից կիրառվող կոնկրետ կանոնի, պատճառների մասին: Տվյալ դեպքում, օգտատերը տեղեկացվել էր, որ իր գրառումը խախտում է Ատելության խոսքի վերաբերալ Ֆեյսբուքի համայնքի ստանդարտները, սակայն չի տեղեկացվել, որ նրա գրառումը պարունակում է ազգային պատկանելիությունը վիրավորող հայհոյանք: ֆեյսբուքի կողմից անբավարար թափանցիկությունը օգտատիրոջը հիմք է տվել սխալ կերպով համարելու, որ իր գրառումը հեռացվել է, քանի որ ընկերությունը համաձայն չէ իր արտահայտած տեսակետի հետ:

*Գործի ամփոփագրերը ներկայացնում են գործի ընդհանուր նկարագրությունը և նախադեպային արժեք չունեն:

<u>Գործի վերաբերյալ ամբողջական որոշումը</u>

1. Որոշման ամփոփագիր

Վերահսկիչ խորհուրդը հաստատել է Ֆեյսբուքի որոշումը հեռացնել Ադրբեջանում եկեղեցիների ոչնչացման մասին գրառումը, որը պարունակում է ատելության խոսքի վերաբերյալ Ֆեյսբուքյան համայնքի նորմերը խախտող վիրավորանքներ:

Խորհրդի կողմից պատվիրված անկախ վերլուծությունը հաստատում է ֆեյսբուքյան մասնագետների կողմից պնդումը, որ գրառումը պարունակում է ադրբեջանական ծագումով մարդկանց ուղղված վիրավորանք, որը խախտում է Համայնքի ստանդարտները: Չնայած գրառումը պարունակում է քաղաքական խոսք, Ֆեյսբուքին թույլատրվել է պաշտպանել օգտատերերի անվտանգությունն ու արժանապատվությունը՝ հեռացնելով գրառումը, մասնավորապես՝ Հայաստանի և Ադրբեջանի միջև զինված հակամարտության պայմաններում:

Գրառման հեռացումը նաև համապատասխանում է մարդու իրավունքների միջազգային ստանդարտներին, որոնցում մարդկանց իրավունքների պաշտպանության համար մշակված են արտահայտման ազատության որոշակի սահմանափակումներ:

Խորհուրդը հորդորում է Ֆեյսբուքին գրառումների հեռացման պարագայում ավելի մանրամասն ներկայացնել պատճառները՝ պարզություն և թափանցիկություն

ապահովելու համար:

2. Գործի նկարագրություն

2020 թ. նոյեմբերին օգտատերը հրապարակել է բովանդակություն, որը ներառել է պատմական լուսանկարներ: Վերջիններիս նկարագրության մեջ նշված էր, որ լուսանկարներում պատկերված են եկեղեցիներ Ադրբեջանում՝ Բաքվում: Հարակից ռուսերեն գրված տեքստում նշված էր, որ հայերը կառուցել են Բաքուն, և որ այդ ժառանգությունը, ներառյալ եկեղեցիները, այժմ ոչնչացված է: Ադրբեջանցիներին նկարագրելու համար օգտատերն օգտագործել է «тазики» («տազիկներ») բառը՝ հայտնելով, որ նրանք քոչվոր են և չունեն պատմություն՝ համեմատ հայերին: «Տազիկի» բառը, որը ռուսերեն նշանակում է «լվացման», թերևս հրապարակման մեջ օգտագործվել է որպես բառախաղ «азики» («ազիկի») բառի հետ, որը ադրբեջանցիներին նկարագրելու համար օգտագործվող վիրավորական խոսք է:

Օգտատերը հրապարակման մեջ ներառել է հեշթեգեր, որոնք կոչ են անում կանգնեցնել ադրբեջանական ագրեսիան և բարբարոսությունը: Մեկ այլ հեշթեգ կոչ էր անում ճանաչել Արցախը՝ Լեռնային Ղարաբաղի տարածաշրջանի հայերեն անվանումը, որի շուրջ կենտրոնացած է Հայաստանի և Ադրբեջանի միջև հակամարտությունը: Գրառումը դիտվել է ավելի քան 45 000 անգամ և հրապարակվել երկու երկրների միջև վերջին զինված հակամարտության ընթացքում:

Ֆեյսբուքը հեռացրել է Ատելության խոսքին վերաբերող իր Համայնքի ստանդարտները խախտող գրառումը: Օգտատերը Վերահսկիչ խորհրդին ներկայացրել է վերանայման հայտ:

3. Լիազորություններ և իրավասությունների շրջանակ

Խորհուրդը լիազորված է դիտարկելու Ֆեյսբուքի որոշումը Խորհրդի կանոնակարգի Հոդված 2-ի (Դիտարկելու լիազորություն) շրջանակներում և հաստատել կամ հետադարձել այդ որոշումը Հոդված 3-ի Բաժին 5-ի շրջանակներում (Դիտարկման ընթացակարգեր՝ որոշում): Ֆեյսբուքը չի ներկայացրել հիմնավորումներ բովանդակությունը բացառելու վերաբերյալ՝ համաձայն Խորհրդի կանոնակարգի Հոդված 2-ի, Բաժին 1.2.1-ի (Բովանդակությունը հասանելի չէ Խորհրդի դիտարկման համար), ինչպես նաև Ֆեյսբուքը չի նշել, որ այս գործը ենթակա չէ դիտարկման՝ համաձայն կանոնակարգի Հոդված 2-ի, Բաժին 1.2.2-ի (Իրավական պարտավորություններ):

4. Համապատասխան ստանդարտներ

Վերահսկիչ խորհուրդն իր որոշման մեջ հաշվի է առել հետևյալ ստանդարտները՝

Ի.*Ֆեյսբուքի համայնքի ստանդարտներ՝*

Ատելության խոսքի վերաբերյալ Ֆեյսբուքի համայնքի ստանդարտը սահմանված է որպես «ուղղակիորեն հարձակում մարդկանց վրա, որը հիմքում ընկած է այն, ինչ մենք անվանում ենք պաշտպանված հատկություններ՝ ռասա, էթնիկ պատկանելություն, ազգային ծագում, կրոնական պատկանելություն, սեռական կողմնորոշում, կաստա, սեռ, գենդեր, գենդերային ինքնություն և լուրջ հիվանդություն կամ հաշմանդամություն»: Արգելված բովանդակությունը ներառում է «բովանդակություն, որը նկարագրում կամ բացասական իմաստով թիրախավորում է մարդկանց հայհոյանքներով, որտեղ հայհոյանքը՝ որպես վիրավորական պիտակներ սովորաբար օգտագործվող բառեր են»:

Ֆեյսբուքի քաղաքականությունը հիմնավորում է, որ նման խոսք չի թույլատրվում, «քանի որ այն ստեղծում է վախի և բացառման միջավայր, և որոշ դեպքերում կարող է նպաստել իրական բռնության»:

ԻԻ.*Ֆեյսբուքի արժեքները՝*

Այս գործին վերաբերող ֆեյսբուքյան արժեքները նկարագրված են Համայնքի ստանդարտների ներածության մեջ: Առաջինը «Ձայնի իրավունքն» է, որը նկարագրված է որպես «գագաթնային».

> *Համայնքի ստանդարտների մշտական նպատակն է՝ ստեղծել վայր, որտեղ մարդիկ կարող են արտահայտվել, և տալ նրանց ձայնի իրավունք: […] Մենք ուզում ենք, որ մարդիկ բացահայտ խոսեն իրենց համար կարևոր թեմաների շուրջ, նույնիսկ եթե ոմանք չհամաձայնվեն կամ վիճելի համարեն նրանց կարծիքը:*

Ֆեյսբուքը սահմանափակում է «Ձայնի իրավունքը» հանուն չորս այլ արժեքների: Խորհուրդը համարում է, որ նշվածներից երկու արժեքներն առնչվում են այս որոշման հետ՝

> *Անվտանգություն՝ Մեր հանձնառությունն է Ֆեյսբուքն ապահով հարթակ դարձնել: Արտահայտությունները, որոնք սպառնում են մարդկանց և կարող են վախեցնել, բացառել կամ լռեցնել նրանց, թույլատրված չեն Ֆեյսբուքում:*
>
> *Արժանապատվություն*: *Մենք հավատում ենք, որ բոլոր մարդիկ հավասար են արժանապատվության և իրավունքների հարցում: Մենք ակնկալում ենք, որ մարդիկ կհարգեն մյուսների արժանապատվությունը և չեն նվաստացնի կամ*

անհանգստացնի մյուսներին:

III. *Խորհրդի կողմից դիտարկված համապատասխան մարդու իրավունքների ստանդարտները.*

Բիզնեսի և մարդու իրավունքների վերաբերյալ ՄԱԿ-ի հիմնադիր սկզբունքները (UNGP), որոնք հաստատվել են ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի կողմից 2011 թվականին, կամավոր հիմք են ստեղծում մասնավոր բիզնեսում մարդու իրավունքների պաշտպանության կհամար: Մարդու իրավունքների և տրանսնացիոնալ կորպորացիաների ՄԱԿ-ի աշխատանքային խումբը, որի խնդիրն է վերահսկել UNGP-ի իրականացումը, անդրադարձել է դրանց կիրառելիությանը հակամարտության իրավիճակներում (A/75/212, 2020): Հիմնվելով UNGP-ի վրա՝ այս գործում հաշվի են առնվել մարդու իրավունքների հետևյալ միջազգային ստանդարտները .

- Արտահայտման ազատության իրավունք. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագիր (ICCPR), Հոդվածներ 19 և 20, ինչպես որ մեկնաբանվում է Մարդու իրավունքների կոմիտեի թիվ 34 հիմնական մեկնաբանությունում (2011) (Հիմնական մեկնաբանություն 34), ՄԱԿ-ի հատուկ զեկուցող կարծիքի և արտահայտման ազատության հարցերով, զեկույցներ՝ A/69/335 (2014), A/HRC/38/35 (2018), A/73/348 (2018), A/74/486 (2019) և A/HRC/44/49 (2020), ինչպես նաև Ռաբաթի գործողությունների պլան, OHCHR, (2012),
- Խտրականության չենթարկվելու իրավունք. ICCPR Հոդվածներ 2 և 26, Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիա (ICERD), Հոդվածներ 1, 4 և 5, ինչպես որ մեկնաբանվում է Ռասայական խտրականության վերացման կոմիտե, ընդհանուր հանձնարարականում, թիվ 35 (2013) (GR35),
- Կյանքի իրավունք. ICCPR Հոդված 6, ինչպես որ մեկնաբանվում է Մարդու իրավունքների կոմիտեի թիվ 36 Ընդհանուր հանձնարարականում (2018) (GC36),
- Անձի անվտանգության իրավունք. ICCPR Հոդված 9, պարբերություն 1, ինչպես որ մեկնաբանված է Մարդու իրավունքների կոմիտեի թիվ 35 Ընդհանուր մեկնաբանությունում, պարբ. 9, (2014):

5. Օգտատիրոջ պնդումը

Խորհրդին ներկայացված հայտում օգտատերը պնդում է, որ գրառումն ատելության խոսք չէր, այն նպատակ ուներ ցուցադրելու Բաքվի մշակութային և կրոնական ժառանգության ոչնչացումը: Նա պնդել է նաև, որ գրառումը հեռացվել է միայն այն պատճառով, որ ադրբեջանցի օգտատերերը, որոնք «ատում են Հայաստանն ու

հայերին», բողոքներ են ուղարկում հայերի կողմից հրապարակված գրառումների վերաբերյալ:

6. Ֆեյսբուքի որոշման բացատրություն

Ֆեյսբուքը հեռացրել է գրառումը, քանի որ այն խախտում է Ատելության խոսքի վերաբերյալ Ֆեյսբուքի համայնքի ստանդարտները՝ պնդելով, որ այն պարունակում է անձի կամ մարդկանց խմբի պաշտպանվող հատկությունը (ազգային պատկանելիությունը) վիրավորող հայհոյանք: Ֆեյսբուքը հայտնել է, որ հեռացրել է մեկնաբանությունը՝ ադրբեջանցիներին նկարագրելու համար «тазики» («տազիկներ») բառն օգտագործելու համար: Բառացի, այս եզրույթը ռուսերեն նշանակում է «լվացման», սակայն նաև կարող է մեկնաբանվել որպես բառախաղ, քանի որ «азики» («ազիկի») բառը, ինչպես բացատրել է Ֆեյսբուքը Խորհրդին, գրանցված է հայհոյանքների ֆեյսբուքյան ներքին օգտագործման ցանկում, որը կազմվում է տարածաշրջանային փորձագետների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ խորհրդակցմամբ: Գրառումը և դրա օգտագործման համատեքստը ամբողջությամբ գնահատելուց հետո, Ֆեյսբուքը որոշել է, որ օգտատերը հրապարակել է հայհոյանք՝ ադրբեջանցիներին վիրավորելու համար:

7. Երրորդ կողմի ներկայացումներ

Վերահսկիչ խորհուրդը դիտարկել է դեպքին առնչվող 35 հրապարակային մեկնաբանություն: Դրանցից երկուսն ուղարկվել են Կենտրոնական և Հարավային Ասիայից, վեցը՝ Եվրոպայից և 24-ը՝ Միացյալ Նահանգների և Կանադայի տարածաշրջանից:

Ներկայացված նյութերը վերաբերում էին հետևյալ թեմաներին՝ Համայնքի ստանդարտները խախտող հայհոյանքների և նվաստացնող արտահայտությունների օգտագործում, հրապարակման փաստացի ճշգրտություն, արդյոք գրառումը իրավական է քաղաքական և պատմական քննարկման համար, ինչպես նաև սկզբնական իրավիճակի և ենթատեքստի, ներառյալ Լեռնային Ղարաբաղի հակամարտության գնահատման կարևորությունը:

8. Վերահսկիչ խորհրդի վերլուծությունը

8.1 Համայնքի ստանդարտներին համապատասխանությունը

Օգտատիրոջ գրառումը խախտել է Ատելության խոսքին վերաբերող Համայնքի ստանդարտները: Համայնքի ստանդարտները բացահայտորեն արգելում են էթնիկ ծագման կամ ազգային պատկանելիության վրա հիմնված հայհոյանքները:

Խորհուրդը նախաձեռնել է անկախ լեզվաբանական վերլուծություն, որը հաստատել է Ֆեյսբուքի՝ այս բառը որպես հայհոյանք գնահատումը: Մեր լեզվաբանական զեկույցը հաստատում է, որ գրառումը ենթադրում է կապ «тазики», այլ կերպ՝ «լվացման» և «азики» բառի հետ, որը հաճախ օգտագործվում է ադրբեջանցիներին նվաստացուցիչ կերպով բնութագրելու համար:

Կարող են լինել դեպքեր, երբ բառերը, որոնք նվաստացուցիչ են մի համատեքստում, կարող են ավելի դրական, և նույնիսկ՝ ոգեշնչող իմաստ ունենալ այլ դեպքերում: Ֆեյսբուքի Ատելության խոսքի վերաբերյալ Համայնքային ստանդարտում նշվում է, որ որոշ դեպքերում «բառերը կամ տերմինները, որոնք այլ կերպ կարող են խախտել [իր] ստանդարտները, օգտագործվում են ինքնաբերաբար կամ ոգևորիչ եղանակով»: Այն համատեքստից, որում այս գրառման մեջ օգտագործվել է «тазики» բառը, պարզ է դառնում, սակայն, որ ադրբեջանցիներին լվացամանի հետ համեմատելը նպատակ ուներ նվաստացնելու թիրախը:

8.2 Ֆեյսբուքի արժեքներին համապատասխանությունը

Խորհուրդը համարում է, որ հեռացումը համապատասխանում է Ֆեյսբուքի «Անվտանգություն» և «Արժանապատվություն» արժեքներին, որոնք այս դեպքում փոխարինել են «Ձայնի իրավունք» արժեքին:

Ֆեյսբուքյան արժեքների միջև «Ձայնի իրավունքը» առաջնային է, քանի որ հարթակի օգտատերերը պետք է ունենան արտահայտման ազատություն: Այնուամենայնիվ, Facebook-ի արժեքները ներառում են նաև «Անվտանգություն» և «Արժանապատվություն»: Խոսքը, որը այլապես պաշտպանված է, կարող է սահմանափակվել, երբ այս բովանդակությունը և այլ նմանատիպ գրառումները հարթակում Ֆեյսբուքի հարթակը պակաս անվտանգ են դարձնում, և, համապատասխանաբար, խաթարում են մարդկանց արժանապատվությունն ու հավասարությունը: Ֆեյսբուքի կողմից ազգային ծագումը թիրախավորող հայհոյանքների օգտագործման արգելքը նախատեսված է այն բանի համար, որ օգտատերերը չհրապարակեն այլ օգտատերերին լռեցնելու, բացառելու, հետապնդելու կամ ստորացնելու նպատակ հետապնդող բովանդակություն: Այս դեպքերը անտեսելու դեպքում նման բովանդակության կուտակումը կարող է ստեղծել այնպիսի միջավայր, որում խտրականության և բռնության գործողություններն ավելի հավանական են:

Այս պարագայում Ֆեյսբուքին թույլատրվեց հայհոյանքի օգտագործումը դիտարկել որպես լուրջ վտանգ «Անվտանգության» և «Արժանապատվության» արժեքներին: Հարավարևելյան Կովկասի հարևաններ՝ Հայաստանի և Ադրբեջանի միջև հակամարտությունը երկարատև է: Վերջերս՝ 2020 թ. սեպտեմբերից նոյեմբեր Լեռնային Ղարաբաղի վիճահարույց տարածքների համար պատերազմը խլել է

հազարավոր մարդկանց կյանքեր: Խնդրահարույց բովանդակությունը հրապարակվել է հրադադարից քիչ ժամանակ առաջ: Այս ենթատեքստը հատկապես կարևոր էր Խորհրդի համար: Թեև թիրախավորող լեզուն կարող է լինել մարդկային փոխազդեցությունների մի մաս, մասնավորապես կոնֆլիկտային իրավիճակներում, արժանապատվությունը նսեմացնող հայհոյանքները կարող են բարձրացնել բռնի գործողությունների վտանգը, ինչին Ֆեյսբուքը պետք է լուրջ վերաբերի:

8.3 Մարդու իրավունքների ստանդարտներին համապատասխանությունը

I. *Արտահայտման ազատություն (Հոդված 19 ICCPR)*

Ֆեյսբուքը ճանաչել է մարդու իրավունքները հարգելու իր հանձնառությունը ՄԱԿ-ի Բիզնեսի և մարդու իրավունքների հիմնադիր սկզբունքների շրջանակներում և նշել է, որ բովանդակային որոշումներ կայացնելիս, ներառյալ զինված հակամարտությունների իրավիճակներում, այն հիմնվում է այնպիսի հեղինակավոր աղբյուրների վրա, ինչպիսիք են ICCPR-ը և Ռաբաթի գործողությունների ծրագիրը:

Խորհուրդը համաձայնում է ՄԱԿ-ի Խոսքի ազատության հարցերով հատուկ զեկուցողի հետ, որ չնայած «ընկերությունները չունեն այնպիսի պարտավորություններ ինչպես կառավարությունները, դրանց ազդեցությունը պահանջում է նման հարցերի նույն գնահատումը՝ օգտատերերի ազատ արտահայտման իրավունքը պաշտպանելու վերաբերյալ» (A/74/486, պարբ. 41). Այդ հարցերի բնույթը հստակեցնելը և դատելը, թե արդյոք Ֆեյսբուքի պատասխանները գտնվում են ՄԱԿ-ի Հիմնադիր սկզբունքների պահանջների տիրույթում, Խորհրդի առջև ծառացած հիմնական խնդիրն է:

Խորհրդի ելակետն այն է, որ խոսքի ազատության իրավունքի շրջանակը լայն է: Իսկապես, ICCPR-ի Հոդված 19, պարբ. 2-ը զգալի պաշտպանություն է ապահովում քաղաքական հարցերով արտահայտմանը, ինչպես նաև պատմական հարցերի քննարկմանը, ներառյալ կրոնական նշանակության վայրերի և մարդկանց մշակութային ժառանգության հարցերը: Այդ պաշտպանությունը գործում է, նույնիսկ եթե պնդումները ոչ ճշգրիտ կամ վիճելի են, և նույնիսկ եթե դրանք կարող են գնահատվել որպես վիրավորական: ICCPR-ի Հոդված 19-ի պարբերություն 3-ում նշվում է, որ արտահայտման իրավունքի սահմանները պետք է բավարարեն օրինականության, իրավաչափության, ինչպես նաև անհրաժեշտության և համաչափության պահանջներին:

Խորհրդի մեծամասնությունը որոշել է, որ Ֆեյսբուքի կողմից այս գրառումը հեռացնելը համապատասխանում է այդ պահանջներին:

a. Օրինականություն

«Օրինականության» պահանջը բավարարելու համար արտահայտումը սահմանափակող ցանկացած կանոն պետք է լինի պարզ և հասանելի: Անհատները պետք է ունենան բավարար տեղեկություններ իրենց խոսքը սահմանափակելու հնարավորության և եղանակների վերաբերյալ, որպեսզի կատարեն ճիշտ գնահատում և համապատասխան վարք դրսևորեն: Այս պահանջը պաշտպանում է կամայական գրաքննությունից (թիվ 34 Հիմնական մեկնաբանություն, պարբ. 25).

Ֆեյսբուքի՝ Ատելության խոսքին վերաբերող Համայնքի ստանդարտով սահմանված է, որ «հայհոյանքները» արգելվում են, և որ դրանք սահմանվում են որպես «բառեր, որոնք էապես վիրավորական են և օգտագործվում են որպես վիրավորական պիտակներ»՝ կապված մի շարք «պաշտպանված հատկությունների», այդ թվում՝ ազգային ծագման ու ինքնության հետ:

Այս դեպքում, Խորհուրդը սահմանել է, որ օրինականության պահանջը բավարարված է: Կարող են լինել իրավիճակներ, երբ հայհոյանքը բազմաթիվ իմաստներ ունենա, կամ օգտագործվի այնպիսի եղանակներով, որը չի համարվի «հարձակում»: Ավելի վիճելի դեպքերում «էապես վիրավորական» և «վիրավորական» հասկացությունները կարող են համարվել չափազանց սուբյեկտիվ և մտահոգություն առաջացնել օրինականության վերաբերյալ (A/74/486, պարբ. 46). Այս դեպքում կանոնի կիրառումը նման մտահոգություն չի առաջացնում: Օգտատիրոջ կողմից բառերի ընտրությունը միանշանակ ընկնում է արժանապատվությունը նսեմացնող խոսքի արգելքի տակ, որը, Խորհրդի կարծիքով, շարադրված է պարզ և հասանելի եղանակով: «Т.а.з.и.к.и» բառը, որը ազգային ինքնությունը կապում է անշունչ և ոչ մաքուր առարկային, միանշանակորեն գնահատվում է որպես «վիրավորական պիտակ»:

Մինչդեռ օգտատիրոջ կողմից կանոնների սուբյեկտիվ ըմբռնումը չի որոշում օրինականությունը, Խորհուրդը նշում է, որ օգտատերը փորձել է թաքցնել հայհոյանքը Ֆեյսբուքի ավտոմատ հայտնաբերման գործիքներից՝ տեղադրելով միջակետեր տառերի միջև: Դա հաստատում է, որ օգտատերը տեղյակ է եղել, որ օգտագործում է Ֆեյսբուքի կողմից արգելված արտահայտություն:

b. Իրավաչափություն

Խոսքի ազատության ցանկացած սահմանափակում պետք է նաև հետապնդի «օրինական նպատակ»: Այդ նպատակները նշված են ICCPR-ում և ներառում են «այլոց իրավունքները» պաշտպանելու նպատակը (Ընդհանուր մեկնաբանություն թիվ 34, պարբ. 28). Ֆեյսբուքի կողմից հայհոյանքների արգելքը նպատակ ունի պաշտպանել մարդկանց հավասարության և խտրականության չենթարկվելու

իրավունքները (Հոդված 2, պարբ. 1, ICCPR), ապահովել հարթակում արտահայտվելու ազատությունը՝ առանց վտանգվելու կամ սպառնալիքների առարկա դառնալու (Հոդված 19, ICCPR), պաշտպանել անձի անվտանգության իրավունքը կանխատեսելի և դիտավորյալ վնասվածքներից_ (Հոդված 9, ICCPR, Ընդհանուր մեկնաբանություն թիվ 35, պարբ. 9) և նույնիսկ կյանքի իրավունքը (Հոդված 6 ICCPR):

c. Անհրաժեշտություն և համաչափություն

Անհրաժեշտությունն ու համաչափությունը պահանջում են Ֆեյսբուքից ցույց տալ, որ խոսքի ազատության իր սահմանափակումն անհրաժեշտ էր սպառնալիքի, տվյալ դեպքում՝ այլոց իրավունքների սպառնալիքի դեմ պայքարի համար, և որ դրանք չափազանց չեն: (Ընդհանուր մեկնաբանություն թիվ 34, պարբ. 34): Խորհուրդը նշում է, որ մարդու իրավունքների միջազգային օրենսդրությունը թույլ է տալիս արգելել «անձանց կամ խմբերին ուղղված վիրավորանքը, ծաղրը կամ զրպարտությունը կամ ատելությունը, արհամարհանքը կամ խտրականությունը արդարացնելը», եթե այդպիսի արտահայտությունը «ակնհայտորեն նշանակում է ատելության կամ խտրականության դրդում» ռասայի, գույնի, ծագման կամ ազգային կամ էթնիկական պատկանելիության հիման վրա (A/74/486, պարբ. 17, GR 35, պարբ. 13).

Ֆեյսբուքի Ատելության խոսքի վերաբերյալ համայնքի ստանդարտով արգելված են որոշ խտրական արտահայտություններ, ներառյալ հայհոյանք՝ առանց որևէ պահանջի այն մասին, որ նման արտահայտությունները դրդեն բռնի կամ խտրական գործողությունների: Միևնույն ժամանակ, նման արգելքները մտահոգություններ կառաջացնեն, եթե Կառավարությունը դրանք կիրառի ավելի լայն շրջանակներում (A/74/486, պարբ. 48), հատկապես եթե դրանք գործադրվեն քրեական կամ քաղաքացիական սանկցիաների միջոցով, ուստի Հատուկ զեկուցողը նշում է, որ Ֆեյսբուքում նման բովանդակության գնահատմամբ զբաղվող մասնագետները կարող են կարգավորել նման խոսքը.

> *Ատելության խոսքի մասշտաբի և բարդության գնահատումը ներկայացնում է երկարաժամկետ մարտահրավերներ և կարող է ընկերություններին ստիպել սահմանափակել նման արտահայտությունները, նույնիսկ եթե դա ակնհայտորեն անբարենպաստ հետևանքներ չունի (քանի որ ատելության քարոզչությունը կապված է հրահրման հետ՝ ըստ ICCPR-ի Հոդված 20(2)-ի): Ընկերությունները, այդուհանդերձ, պետք է շարադրեն նման սահմանափակումների հիմքերը և ցուցադրեն բովանդակության վերաբերյալ կատարված ցանկացած գործողության անհրաժեշտությունն ու համաչափությունը:* (A/HRC/38/35, պարբ. 28)

Խորհրդի մեծամասնությունն այս դեպքում օգտագործված հայհոյանքը որակել է որպես ատելություն պարունակող և արժանապատվությունը նսեմացնող: Չնայած դա հրահրող չէր, այնուամենայնիվ, առկա էր բացասական հետևանքների հնարավորություն: Համատեքստը առանցքային է: Խորհուրդը ողջունում է Ֆեյսբուքի այն բացատրությունը, որ այս բառի որակումը որպես հայհոյանք կատարվել է այն տեղական փորձագետների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ խորհրդակցմամբ, որոնք տեղյակ են դրա համատեքստային օգտագործմանը:Մեծամասնությունը նշել է, որ ամբողջությամբ ընթերցված գրառումը չի թողնում տարակուսանք այն բանի վերաբերյալ, որ օգտատերն ընտրել է այս հայհոյանքը ոչ պատահաբար, այլ մտադրված կերպով թիրախային խմբին նվաստացնելու նպատակով: Առավել ևս, խնդրահարույց գրառումը հրապարակվել է օգտատիրոջ և թիրախային խմբի երկրների միջև զինված հակամարտության ամենաթեժ փուլում:Արժանապատվությունը նսեմացնող խոսքի օգտագործումն այս ենթատեքստում կարող է առցանց հետևանքներ ունենալ, ներառյալ նվաստացուցիչ միջավայրի ստեղծում, որտեղ վտանգվում է մարդկանց կարծիքների արտահայտման ազատությունը: Մասնավորապես զինված հակամարտությունների ժամանակ հարթակում ատելությամբ լի և արժանապատվությունը նսեմացնող արտահայտությունների հրապարակումն ու տարածումը կարող է առաջացնել մարդու անվտանգության և նույնիսկ կյանքի համար իրական վտանգ նաև համացանցից դուրս: Այս դեպքում, Խորհրդի մեծամասնության համար, նման վտանգների առկայությունը և Ֆեյսբուքի հանձնառությունը պաշտպանել մարդու իրավունքները, թույլատրելի են դարձրել հայհոյանքը հարթակից հեռացնելը:

Ավելին, Խորհուրդը գրառման հեռացումը համաչափ է համարում: Պակաս խիստ միջամտությունները, ինչպիսիք են՝ պիտակները, նախազգուշացման էկրանները կամ տարածումը կանխելու այլ միջոցները, չէին ապահովի նույն պաշտպանությունը: Հատկանշական է, որ Ֆեյսբուքը չի ձեռնարկել ավելի խիստ միջոցներ, ինչպիսիք են օգտատիրոջ հաշիվը կասեցնելը, չնայած վերջինս վիրավորական բովանդակությունը մի քանի անգամ վերահրապարակել է: Սա ցույց է տալիս, որ, չնայած տվյալ բովանդակության հեռացմանը, օգտատերը մնաց ազատ՝ քննարկելու նույն խնդիրները Համայնքային ստանդարտների սահմաններում:

Փոքրամասնության կարծիքով, Ֆեյսբուքի կողմից գրառման հեռացումը համաչափ չէր, քանի որ մեծամասնության կողմից ենթադրված ռիսկերը շատ վերացական էին և կանխատեսելի չէին: Ուստի պետք է կիրառվեին սահմանափակման այլընտրանքային և նվազ ներխուժող պարտադրման եղանակներ: Օրինակ՝ բովանդակությանը նախազգուշացման կցում կամ դրա քողարկում, տարածման սահմանափակում, հակառակ բնույթի հրապարակումների խրախուսում կամ այլ

տեխնիկաների կիրառում: Այս փոքրամասնության կարծիքով, մեկ հայհոյանքի պատճառով հասարակական նշանակության գրառման ամբողջական հեռացումը հակասում է անհրաժեշտության և համաչափության պահանջին:

Փոքրամասնության մեկ այլ տեսակետն այն էր, որ անշունչ օբյեկտի վրա հողումը վիրավորական էր, բայց ոչ արժանապատվությունը նսեմացնող: Այս տեսակետը համարում էր, որ վիրավորանքը չի նպաստի ռազմական կամ այլ բռնի գործողությունների:

9. Վերահսկիչ խորհրդի որոշումը

9.1 Բովանդակության վերաբերյալ որոշում

Խորհուրդը հավանություն է տալիս օգտատիրոջ գրառումը հեռացնելու վերաբերյալ Ֆեյսբուքի որոշմանը:

9.2 Քաղաքականության վերաբերյալ խորհուրդ

Խորհուրդը հորդորում է Ֆեյսբուքին՝

- Հետևել, որ օգտատերերը միշտ ծանուցվեն իրենց նկատմամբ Համայնքի ստանդարտների ցանկացած կիրառման պատճառների մասին, ներառյալ կանոնը, որը Ֆեյսբուքը կիրառում է կոնկրետ դեպքում: Դա հնարավորություն կտա Ֆեյսբուքին խրախուսել խոսքը, որը համապատասխանում է իր Համայնքի ստանդարտներին, այլ ոչ թե օգտատերերի նկատմամբ հակառակորդի դիրքորոշում որդեգրել: Այս դեպքում օգտատերը տեղեկացվել է, որ գրառումը խախտում է Ատելության խոսքի վերաբերյալ Համայնքի ստանդարտը, բայց նա չի տեղեկացվել, որ գրառումը խախտում է ստանդարտը, քանի որ այն պարունակում է ազգային ծագումը թիրախավորող հայհոյանք: Այս դեպքում Ֆեյսբուքը բավարարել է օրինականության սկզբունքը, սակայն Ֆեյսբուքի թափանցիկության բացակայությունը բերել է այն սխալ համոզմանը, որ գրառումը հեռացվել է, քանի որ օգտատերը անդրադարձել է վիճարկելի թեմայի կամ արտահայտել է տեսակետ, որի հետ Ֆեյսբուքը համաձայն չէ:

<u>Ընթացակարգային նշում՝</u>

Վերստուգիչ խորհրդի որոշումները կազմվում են հինգ անդամների կողմից և պետք է համաձայնեցվեն Խորհրդի մեծամասնության հետ: Խորհրդի որոշումները կարող են չարտահայտել Անդամների անձնական կարծիքը:

Այս դեպքի վերաբերյալ որոշում կայացնելու համար Խորհրդի կողմից պատվիրվել է անկախ լեզվաբանական վերլուծություն: Անկախ հետազոտական ինստիտուտը, որի կենտրոնը Գյոտեբորգի համալսարանն է, և որը կազմված էր վեց

մայրցամաքների ավելի քան 50 սոցիալական գիտությունների գիտնականների, ինչպես նաև աշխարհի ավելի քան 3200 երկրների փորձագետների թիմից, փորձաքննություն է իրականացրել սոցիալ-քաղաքական և մշակութային համատեքստում: Lionbridge Technologies LLC՝ ընկերությունը, որի մասնագետները լավ տիրապետում են ավելի քան 350 լեզուների և աշխատում են աշխարհի 5000 քաղաքներից, լեզվաբանական փորձաքննություն է տրամադրել: